ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի մասին հաշվետվությունը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների պահանջներով:

1. Բյուջեի եկամուտների կատարողականը

2023 թվականի Գավառ համայնքի բյուջեի եկամուտները տարեկան ծրագրով նախատեսված 2,684.494.357 դրամի դիմաց փաստացի կատարվել է 1,514,861.462 դրամ, որը կազմում է 56.4 %:

<u>Վարչական բյուջեի եկամուտները</u> առաջին կիսամյակի համար նախատեսված 1,128,873,300 դրամի դիմաց փաստացի կազմել է 1,200,884,400 դրամ, որը կազմում է 106.4 տոկոս:

Սեփական եկամուտների գծով նախատեսված 378,238,000 դրամի դիմաց փաստացի կատարվել է 451,642,300 դրամ, որը կազմում է 119.4 %:

Առաջին կիսամյակի կատարողականը ըստ առանձին եկամտատեսակների ունի հետևյալ տեսքը.

- Գույքային հարկեր անշարժ գույքից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 47,734,414 դրամ՝ կատարվելով 73,2 %-ով, իսկ գույքահարկ փոխադրամիջոցներից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 197,477,196 դրամ՝ կատարվելով 121,7 %-ով:
- Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 4,395,943 դրամ՝ կատարվելով 113,0 %-ով:
- Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 7,025,800 դրամ՝ կատարվելով 114,2 %-ով:
- Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով Գավառ համայնքին նախատեսվել է ֆինանսական համահարթեցման դոտացիա 743,505,700 դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիաներ ՝ազգային նվագարանների գծով/ կազմել է 4,548,600 դրամ, որոնք ամբողջովին ֆինանսավորվել են:
- Գույքի վարձակալությունից վճարները համայնքի բյուջե մուտք է եղել 7,125,334 հազար դրամ՝ կատարվելով 32,1 %-ով:
- Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները կազմել է 1,187,840 հազար դրամ:
- Տեղական վճարների մուտքերը կազմել է 78,159,570 հազար դրամ՝ կատարվելով 79,4 %-ով:

Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից մուտքերը կազմել է 5,139,512 դրամ՝ կատարվելով 171,3 %-ով:

- Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կազմել է 407.679 դրամ՝ կատարվելով 122.4 %-ով:
- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել է 104,176,800 դրամ՝ կատարվելով 619.9 %-ով:

Առաջին կիսամյակի Ֆոնդային մասի եկամուտները՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը փաստացի կազմել է 20,430.630 դրամ, որը կազմում է 9.9 տոկոս: Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը կազմել է 278,790.274 դրամ, իսկ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) կազմել է 313,977.063 դրամ, որն ուղղվել է 2022-2023 թթ . նախատեսված սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորմանը:

2. Բյուջեի ծախսերի կատարողական

2023 թվականի առաջին կիսամյակի վարչական բյուջեի ծախսերի պլանը կազմել է 1,478,692,400 դրամ, որի դիմաց կատարվել է 1,096,697,685 դրամ, կամ 74,2 %-ով:

Գավառ համայնքի 2023 թ. վարչական բյուջեի ծախսային մասը ունի հետևյալ կառուցվածքը ըստ գործառնական դասակարգման

Ծախսերի անվանումը	Պլան տարեկան	Պլան 1-ին կիսամյակ	Փաստացի	Տոկոս
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ	**507749,4**	**260090,2**	**172813,5**	**66,4**
Օրենսդիր և գործադիր մարմիններ	412819,4	209126,2	146639,2	70,1
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4630,0	2448,0	1884,6	77,0
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	90300,0	48516,0	24289,7	50,1
Պաշտպանություն	1500,0	1500,0	295,0	19,7
Տնտեսական հարաբերություններ այդ թվում՝	177139,9	174420,4	148488,4	85,1
Գյուղատնտեսություն	106945,4	106945,4	103345,1	0,0
Ոռոգում	2000,0	1775,0	0,0	0,0
Ճանապարհային տրանսպորտ	68194,5	65700,0	45143,3	68,7
Շրջակա միջավայրի պաշտպանություն	233554,6	127780,0	88091,2	68,9
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	44180,4	38680,4	32568,2	84,2
Հանգիստ, մշակույթ և կրոն	127643,0	80489,8	32354,6	40,2
Կրթություն	787530,9	434731,6	338316,5	77,8
Սոցիալական պաշտպանություն	12000,0	7000,0	4980,0	71,1
Պահուստային ֆոնդ	445000,0	354000,0	278790,3	78,8
ԸՆԴԱՄԵՆԸ	**2336298,2**	**1478692,4**	**1096697,7**	**74,2**

2023 թվականի առաջին կիսամյակի ֆոնդային բյուջեի պլանավորված 826,147,500 դրամի դիմաց կատարվել է 743,386,614 դրամով, կամ 90,0 %-ով:

Գավառ համայնքի 2023թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասը ըստ գործառնական դասակարգման ունի հետևյալ տեսքը

Ծախսերի անվանումը	Պլան տարեկան	Պլան 1-ին կիսամյակ	Փաստացի	Տոկոս
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	**137667,1**	**90667,1**	**76061,8**	83,9
Օրենսդիր և գործադիր մարմիններ	90922,1	78922,1	65692,3	83,2
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	46745,0	11745,0	10369,5	88,3
Պաշտպանություն	3000,0	3000,0	0,0	0,0
Տնտեսական հարաբերություններ	318352,7	189327,0	175688,7	92,8
Շրջակա միջավայրի պաշտպանություն	10000,0	10000,0	0	0,0
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	94100,2	78546,0	74654,9	95,0
Հանգիստ, մշակույթ և կրոն	539065,9	335929,4	306225,2	91,2
Կրթություն	213310,7	128678,0	110756,0	86,1
ԸՆԴԱՄԵՆԸ	**1315496,6**	**826147,5**	**743386,6**	**90,0**